



# ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԴ. 1865 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՕԳՈՍՏՈՍ

ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ

† 18 ՄԱՐՏ, 758

Այս գեղեցիկ և բնիկ հայկական անունս՝ որ ազգային պատմագիտաց կու յիշեցրնէ իրենց ոչ սակաւ ընտիր դիւցանման և սրբազանեալ նախնինե-  
րը, հոս իրին կցորդ հայրենական կու-  
մամբն Գողթնացի՝ կու յափշտակէ ըզ-  
սիրտ առ այն վահան, որ թէ ոչ քա-  
ղաքական և պատերազմական հանգի-  
սիւք՝ հռչակուեցաւ իբրեւ զմեծ Մամի-  
կոնեանն վահան, սակայն քան զնա և  
քան զայլ համանունս վերադասի յազ-  
դային հոգիս, այնպիսի զգացմամբ՝  
որք աւելի զօրաւոր և սրբազան են քան  
զարիւթիւն և զխորագիտութիւն. —  
սուգ, սէր և սրբութիւն. — իսկ եթէ  
ասոնց հետ հայրենասիրութիւն ալ պա-  
հանջուի, ոչ պակաս քան ՚ի Մամիկո-  
նեանն երեւի և ՚ի Գողթնացիս, թէպէտ  
և ՚ի սա նոր օրինակ կերպով մը. գու-  
ցէ աւելի սաստիկ, անշուշտ աւելի սըր-

տառուչ, հայկազին հրեղէն հանճարն՝  
(որ թողած է բաւական պայծառ նը-  
շաններ՝ իր հնութեան հաւասարապա-  
տիւ կանգնելու և ցուցնելու իր սիրտն  
այլ.) մոռացութեանց մոխրոց տակ եր-  
կու վառվռուն կայծակներ պահեր է  
՚ի յիշատակ Գողթնացւոյս վահանայ .  
որովք և սա և մեր ազգին գրականու-  
թիւնն և ազնուական զգացմունքն՝ ան-  
գամ մ'այլ անմահութեան հաւաստիք  
կ'առնուն, քանի որ ՚ի մատեանս պատ-  
մըշաց մերոց մնայ վահանայ վկայութա-  
նոշքիւնն, և ՚ի դասս եկեղեցւոյ մերոյ՝  
Գողթնացւոյն շարականն :

Ըստ ինքեան գեղեցիկ մանաւանդ  
թէ սխրալի և սրտառուչ պատմութիւ-  
նը կամ դիպուածը՝ այն երկու կայ-  
ծակնաճաճանչ գրուածքն աննման չնոր-  
հօք և վայելչութեամբ մը զարդարե-  
ր են, Անոնցմով՝ եկեղեցի, հայրենիք և



սրտային գորովանք՝ սքանչելապէս խառնուած, իբրեւ ոսկւոյ, արծաթի և ծիրանւոյ սեփական հիւսուածք մ'այլ կու ցոլացընեն մեր հայրենի յիշատակաց մէջ. որուն գեղեցկութեանն անկարելի էր բան մը պակաս գտնել, եթէ, — փառք ազնիւ հայրենեաց կամ հայրենակցաց մերոց, — ո՞վ Հայկակ, հայկական սիրտն՝ հանճարէն այլ վեր թռչելով ճարտարած չըլլար այնպիսի գեղեցիկ հիւսուածի մէջ այլ նրբագոյն մանուշակ մը մանել, և անով Գողթնացոյն յիշատակը փափկագոյն իմբ բարձրացընել քան զՄամիկոնեանն, քան զկամարական, քան զԳնունին, քան զՎանն այլ վահան: — Այս մանրակտիտ մանուշագոյն մանուածս՝ է հին առանդոքի մը. աւանդութիւն մը՝ որ իրեն երաշխաւոր ունի վերոյիշեալ շարականը, այն հայկական հանճարոյ մէկ չքնաղ կայծակը. հազար հարիւր տարի քշած անգիր յիշատակ մը, բերնէ բերան, սրտէ 'ի սիրտ անցած. սիրտտարփ, նրբագգած և նրբասեռ անձի մը, Հայոռնոյ մը յիշատակ, զոր պատմութիւնն սքողէ, աւանդութիւնն կոչէ քոյր վահանայ. և շարականն այն վրկայէ՝ թէ իր հեղինակն արդարեւ կամ քոյր կամ քոյրանման սիրային զարմանուհի մ'էր վահանայ. — միով բանիւ, աներկբայ հայկածղի մուգայ մ'էր, որուն սրտին, մտաց և մատանց թափուած երգը՝ յափշտակեր է մեր սուրբ եկեղեցին, և իր պատուականագոյն բառաւոր գանձուց մէջ շարելով՝ անմահ հափայլ պահէ թէ զփառս իր և մեր վահանայ, և թէ անոր հայրենեացը՝ Գողթն:

Ա. ԳՈՂԹՆ... Թէ և քիչ մը խորթացեալ անուն, և ոչ պայծառասփիւռ իբրեւ ուրիշ հին հայկազնեան անուններ, և հաւանօրէն (մեր հին ազգին մօտաւոր) Մարաց գաղթականէն մտած կամ այլայլած, սակայն յիշատակզն և բնութեամբն իսկ հաճոյ՝ ամեն սիրուն և ուրախ սրտի, նաև տխուրի: Գոնէ 2500 տարիէ վեր լուծած և յիշուած

անուն 'ի պատմութեան, և մինչև հիմայ նոյնպէս կոչուած 'ի մերազգի բընկաց, և յօտարաց՝ ֆիլիք. հիմայ՝ ծանօթ իբրեւ գեղաւառ մը. մեր մատենագրաց մէջ՝ իբրեւ գաւառ մը, և մերիններէն հնագոյն օտար աշխարհագրաց՝ իբրեւ առանձին նահանգ կամ աշխարհ մը. այսինքն՝ անկախ նախարար կամ նահապետ ունող, ինչպէս Սիւնիք, և ուրիշ տասնեհինգ աշխարհքն Հայոց Մեծաց: — Գողթն. զոր բնահայ գետոյն երասխայ անութն՝ իր ընթացից հարաւագոյն մասամբը պատելով կու գգուէ, զիրացընէ և զինովցընէ. — Գողթն, կերպով մը հակառակորդ Շիրակայ, որ ունի լիութեամբ զնաց հաստատիչ սրտի. իսկ ինքն զգինի՝ որ « ուրախ առնէ ըզսիրտ մարդոյ »: Ասոր այդեաց անոյշ ազդեցութեամբն՝ բնակիչքն այլ եղան երգահանք, բանաստեղծք, աւանդապահք քաջութեան դիւցազանց, հայկական ցանկալի հին յիշատակաց, և ճարտար գործածողք ազգային գլխաւոր երաժշտական գործոյն, որ է քաւճ թիւն փառապանծ: Մինչև հիմայ, թէ և Գողթնացոց կամ Ագուլեցոց (Գողթն գաւառին մէկ աւանն է Ագուլիս, որ թուի ըսել Այգուլիք, այգիներով լիք) լեզունին թէ և թանձր ու խորթ, անշուշտ հին Մարաց լեզուէն խառնուած, սակայն բառերն և բացատրութիւնք նշանաւոր են բանաստեղծութեամբ: — Գողթն, իրեն գինաւետ ափունքը կ'ողորէ յեզր երասխայ, մօտ անոր կարկաշահոս քարավազից, բնութեան զարմանակերպ, ահեղագեղ, միանգամայն և դալարազուարճ ու բարբեր ձորահովտաց մէջ: Ասկէ լաւ տեղ կրնար ընծայուիլ մեր ազգային Անակրէոնից, և անոր հետեողաց աշխոյժը և ախորժակը վառելու: — երասխայ հանապազահոս վիժանաց ձիւնափայլ փրփուրքն այդեաց ընծայած ծիրանափայլ պղպրջակին հետ խառնած, կ'արծարծէր մեր հայրենի բամբիւր, և հազարամեայ յիշատակներ երեկուան դիպուածի մը պէս կու հնչէին 'ի Գողթն. և Քրիստոսէ հինգ դար վերջը՝ իր Տարօնոյ Մեղ-



բայ-գետը թողած՝ կու լսէր մեր խորե-  
նացի պատմահայրն՝ հեռաւոր Գողթան  
և անոր սահմանակից Մեղրայ աւանին  
գետակաց եղբը՝ Քրիստոսէ հինգ վեց  
դար առաջ փայլած և փառաւորած ազ-  
գային մեծագոյն դիւցազին ծագումը,  
վահագնի այլաբանեալ ծնունդը, զոր

« Երկնէր երկին, երկնէր երկիր,  
Երկնէր եւ ծիրանի ծովն » . . .

Երնեկ մեր պատմահօրն, որ այնքան  
ողբալի լուսթեանց մէջ՝ գոնէ այսպիսի  
երգոյ մը համար կրցաւ ըսել, թէ « զայս  
» երգելով ոմանց բամբուսմը՝ լուսք մե-  
» րովք իսկ ականջօք » . և դարձեալ ա-  
սոր նմաններն այլ կու յիշէ, թէ անկէ  
հին և թէ այլ շատ մօտ (Քրիստոսի Բ դա-  
րուն հանդիպած) դիպուածոց վրայօք,  
որոց վրայ աւելցան ժամանակաւ նորա-  
նոր քաջաց գովասանք, իբրեւ ազգային  
պանծալի վիպասանութիւն մը հիւսե-  
լով, որոյ պատմութիւնն երբեմն միա-  
շար և երբեմն ընդհատ, հաւանօրէն եր-  
կարեցաւ ինչուան մեր մեծ պատմիչն  
օրերը և այլ վար, (թէ և անկէ ետեւ  
շատ ցաւեր և ձիւներ անցան մեր ծեր  
հայրենեաց զլիսէն) . դեռ երբեմն բար-  
բառէր բամբիւն Գողթան, կու հնչե-  
ցընէր հատկաւ հազագներ, և ընդ  
գովասանութեան քաջազանց՝ գուցէ  
խառնէր քանի մ'այլ խոր հառաչանք :  
Դեռ Հայկազուն և Աթաղահակեան խնա-  
մեցեալ պայազատաց սերունդքն իշխա-  
նաբար ճոխային ճեմէին Երասխայ դա-  
րափանց և ձորոց մէջ . և դեռ ունէր  
Գողթն մինչև 'ի սկիզբն Բ դարու իր ա-  
ռաքինի հնազարմն իշխեցողը՝ Խոս-  
րով, զոր սուրբ կ'անուանէ ժամանա-  
կին պատմիչն . և որոյ սրբագոյն և ծա-  
նօթագոյն շառաւիղ մը ծագեցաւ 'ի  
սկիզբն Բ դարու (յամի 702) մեր զը-  
րուատելին վահան : . . .

Ո՛վ պանծաձայն բամբիւն Գողթան,  
արդեօք նաւասարդի սաղարթներով  
պսակուած, և գինաւէտ այգեացող լայ-  
նատերեւ բարունակներով պլլւած՝ ե-  
րեցար այս անգամ՝ այլ, երգեցիր մեր  
հին վահագնին նմանցընելով՝ այս քու  
նոր (և թերեւ յետին) վահանիդ ծը-

նունդը .- ո՛ր գոյն երկինք, ո՛ր գոյն երկիր,  
կամ ո՛ր ծով ծիրանի երկնեց զսա . ինչ  
կարմրիկ եղեգն էր որ բարձրացուց զսա  
'ի ծովէն . կամ ինչ ծովս, ինչ բոց էր՝  
որ կ'ելնէր անկէց . . . ո՛հ, այն ինչ ծծըմ  
բախառն մուխ էր՝ ուսկից « վազէր  
խալառեալ պատուանեկիկն » մեր : . . .  
Հայկակ, ես այս ծխէն մղձկած՝ կու կոր-  
սընցնեմ Գողթան բամբիւն . կու լսեմ  
ուրիշ բոմբիւն, ուրիշ վիպասանու-  
թիւն, որ յանկարծ մահուան թմբկի  
պէս կ'որոտայ, նոր և այլակերպ ծի-  
րանի ծովու մը ծխոյ ու բոցոյ մէջ .  
« Ահա մերկացաւ սուրն վաղակաւոր  
» 'ի պատենիցն, զոր տեսանող ակամբն  
» յառաջագոյն սպառնացեալ ողբայր  
» մարգարէն : Սուր ծարաւի արեամբ՝  
» զարթեալ 'ի մեզ ազգն Իսմայելի,  
» ընդ չորեսեան կողմանս երկրի գո-  
» չեալ առիւծաբար, կամ իբրեւ չորե-  
» քին հողմովք բախելով զծով, զաշ-  
» խարհիս մեծութիւնս : Ո՛ր արդեօք  
» թէ և առ Իսրայէլ լինէր մարգարէու-  
» թիւնն, զայն և առ մերս առնու ձայնն .  
» մանաւանդ՝ Երուսաղէմ մինչև 'ի հիմն  
» քակեալ լինէր, և մեր՝ բոլոր աշ-  
» խարհս քակեալ աւերեցաւ : Զվայել-  
» չութիւն երկրիս օտարազգիք կալան .  
» ազատութիւն և տէրութիւն և իշխա-  
» նութիւն նախարարացն՝ անարգու-  
» թեամբ յերկիր կործանեցաւ : Անդ  
» մանկունք տղայք դքարի հարեալք .  
» և մերքս առ հասարակ ծնողք և ման-  
» կունք՝ 'ի գերութիւն . որ և զմարցն  
» առեալ ողբայր երեմիա, այն և մեզ  
» իսկ զիպեցան 'ի դէպ ելանել : . . .  
» վասն զի մրրիկ տապախառնի տրխ-  
» րաբեր շնչեալ օդովն հարաւոյ, բարձ-  
» դառազաստն փափկութեան . բար-  
» ձեալ զպատուականութիւն և զսրբ-  
» բութիւն լուսազարդափայլ ծածկու-  
» թեանն, որ փոխանակ զրախտին շնոր  
» հեցաւ մեզ՝ 'ի կենաց փայտէ խաչին  
» Քրիստոսի, և յայտնեցաւ թխութիւն  
» թանձրութեան կտաւոյն . խաւարա-  
» մած թանձրութիւն անհնարին սիու-  
» թեանս . գոյն, որ ունեւոց էր զամե-  
» նայն աշխարհս Հայաստան երկրիս » :



Այսպէս կուսկսի Արծկէացին, երաշխաւորի վանահայրն Արտաւազդ, իր « Ողբքն վասն չարեացն որ ան... » ցին 'ի վերայ աշխարհիս Հայոց... և վկայաբանութիւն Ս. Վահանայ » : Նախերգանք կսկծալի՝ ըստ դիպուածոց պատմութեան, պանծալի՝ ըստ մատենագրութեան. որ մէկէն 'ի մէկ ընթերցողին առջև կուծաւալէ՝ Դամասկացի թրերուն թօթափած կայծերովը ձեացած ծիրանի ծովը. ծով արեան, ծով մեր հարազատ արեան, ուսկից կ'արձակի կորացեալ կարմրիկ եղեգն այլ, և անոր մարմնած բոցոյն միջէն վազէ մեր խարտեալ պատանեկիկն Վահան : — Նաւթով ու ձիւթով օծեալ են այն եղեգներն՝ բռնկած ու բորբոքած, որ Գողթան մօտ Նախճաւան և խրամ (կամ Հրամ) աւանաց մեծ եկեղեցեաց քակած տանիքներուն մէջ կ'եռան ծծմբաձոյլ օձերու պէս, և վար կուծափին հրածորան անձրևի նման : Եկեղեցեաց դռներն դրսէն չէ թէ միայն գոցուած, այլ և աղիւսով հիւսուած, պատերուն հաւասար պնդած փակուած են, որ չկարենայ մարդ դուրս ելնել. և եթէ անակնկալ կերպով մէկն ծակէ մը կարենայ սողալ սահիլ, պատերուն տակը սպառազէն արաբացի գունդեր սուսերամերկ կու պտըտին կու վազվըղեն քաղցած գայլոց նման, հրոյն մէկ ժամուան մէջ ընելիքը՝ սրոյն վայրկենովը լմնցնելու. մէկ հարուածով մը սպաննելու : Անկարելի է թէ դուրս ելնեն թէ դուրսը վայրկեան մը ապրիլն : — Իսկներսը... Սակայն մեզի այլ հարկ է, ծանր հարկ մը, գոնէ մօտենալ այդ հնոցիդ, և յիշել անոր պատճառը և նիւթը :

Բ. Վաթսուն տարի էր որ Հագարացիք մտեր և տիրեր էին 'ի Հայաստան. իրաւ, երբեմն բարեբարոյ և արդարախոհ ամիրապետաց և ոստիկանաց և մերազգի իշխանաց խոհեմութեամբն՝ հանգիստ և խաղաղութիւն կու գտնէր աշխարհն, բայց շատ անգամ այլ կամ մերայոց անզգուշութեամբ և կամ հարկահանաց բռնաբարութեամբ՝ նեղու-

թիւն և վտանգ պակաս չէր. մանաւանդ ետքը՝ երբ Ատրպատական աշխարհին կուսակալն ապստամբելով ամիրապետէն՝ Հայք այլ սկսան գլուխ քաշել, և օգնութեամբ Յունաց՝ Դրենայ մէջ պաշարելով զԱրաբացիս՝ բիւրաւոր մարդ ջարդեցին, մինչ ընդդէմ Հոնաց կամ Խազրաց զացեր էր իրենց ոստիկանն՝ Մահմէտ Բ, հզօր և ահաւոր. որ և շուտով Աբգլա, Ալի Ահմէտ, Օգբա, Գասրմ, և ուրիշ զօրավարք և կողմնակալք թափեցաւ 'ի Հայս (յամի 698-702) և շատ վրէժ ու չարիք հասուց Հայոց. որոց մէջ ցաւով նշանաւորք են Սեանայ բերդին երեքամեայ պաշարումն 'ի ծովուն Գեղամայ, և բոլոր մէջը գտուողաց կոտորումն. մէկ մ'այլ Բագրեան, զայ Ս. Գրիգորի մեծ և հարուստ վանաց անիրաւ կողոպտումն և միաբանից կոտորածն. ըստ ոմանց և ծերունի շնորհազարդ Սահակ կաթողիկոսին և շատ իշխանաց կապանօք քշուիլն մինչև 'ի Դամասկոս, և մնացելոցն 'ի հայրենիս՝ անտանելի տառապանքն և տարակոյսն. մանաւանդ երբ ոստիկանն Մահմէտ՝ իր հարուածքն ընելէն ետև դարձաւ յԱսորիս, և իր տեղ թողուց մէկ այլ կողմնակալները, որ աւելի ցած և անօրէն մարդիկ էին. և հնարք կու մտածէին բոլոր Հայոց մեծամեծները ջնջելու աշխարհքէն, որպէս զի համարձակ ծծեն անոր պարարտութիւնը և աղբատաց արտսուներ :

Սմբատ Բագրատունի՝ նախարարաց զօրագլուխն, իր ցեղակից իշխանները և ուրիշ ցեղերէ այլ գլխաւորներ գաղտուկ ժողովեց 'ի Խորհուրդ, թէ ինչ ընեն այսպիսի վտանգաւոր ատեն. — ուրիշ ճար չգտան, բայց եթէ իրենք զիրենք ապրեցնեն՝ փախչելով յարևմուտրս, Յունաց կայսեր երկիրը : Գնացին Խորհուրդ հարցուցին նաև անուանի սրբակրօն ճգնաւորի մը, որ վանայ ծովուն արևելեան կողմերը կը բնակէր. նա այլ լալով ողբալով ուրիշ խրատ չկրցաւ տալ, բայց միայն որ զգոյշ կենան, յանդգնութեամբ բանի ձեռք չդարնեն. և վրանին աղօթելով արձա-



կեց, Դարձան ասոնք իրենց հաւատա-  
րիմները ժողովելու՝ որ հեռանան հայ-  
րենի սահմաններէն. և զգուշութեամբ  
երթալով ելան դէպ 'ի Մասիա լեռը և  
բանակեցան յանուանի աւանն Ակոռի.  
և ահա լսեցին որ այլազգիք իմացեր են  
իրենց միտքը, ու Նախճաւանի կողմնա-  
կայն 8000 և աւելի հոգւով ետենուն  
ընկած՝ « ոչ մեկնեցան 'ի հետոց նոցա .  
» քանզի... կամէին կենդանւոյն կլա-  
» նել զնոսա » : Մերոնք փութացան  
փրթան լեռնէն վար, անցան Երասխ  
գետը և Վարդաւառկերտ՝ ըսուած ա-  
ւանի մը մէջ բանակեցան, որ կարծեմ  
խորվիրապի մօտերն էր. այլազգիք այլ  
նորէն ետենուն ընկան : Հայք մէկ կող-  
մանէ բանակին ամրացընելով և գի-  
շերապահներ դնելով, միւս կողմանէ  
պատգամ՝ զրկեցին առ Արաբացիս և  
իմացուցին որ իրենց մտածութիւնն ու-  
րիշ բան չէր, բայց միայն գլուխին ապ-  
րեցընել փախստեամբ և օտարութեամբ,  
իրենց տեղն ու ստացուածքը՝ թողլով  
անոնց ձեռքը. ուրեմն թող տան՝ որ  
մնաս բարով ըսեն, հեռանան իրենց  
հայրենիքէն : — Եւ ոչ այս ցաւալի հրա-  
ժարական ողջոյնը տալու ներեցին բռ-  
նաւորքն, այլ յարձակեցան Հայոց վը-  
րայ, որք և ոչ 2000 հոգի էին. սակայն  
աղօթիւք և վերջին ջանքով ու քաջու-  
թեամբ միաբանեալ՝ դէմ ելան իրենց-  
մէ չորս և հինգ հեղ բազմաթիւ բանա-  
կին այլազգեաց : Ասոնք կէս մը գիշե-  
րուան ցրտէն փառցած, (վասն զի ձմեռն  
էր և ձեան վրայ անցուցեր էին գիշերը),  
կէս մը ցուրտ հովէն ծեծուած, և այլ  
աւելի՝ յուսահատեալ քաջաց հարուած-  
ներէն, բոլորովին շփոթեցան, քշուե-  
ցան, ջարդուեցան. փախչողներն այլ  
թափեցան Երասխայ վրայ՝ որ անդին  
անցնին. գետն որ սառեր էր՝ անոնց  
փախստական ոտից դոփմանէն պատռու-  
տելով՝ ներքեն առաւ, կլլեց, ծածկեց.  
և այն ահարկու սպառազէն բիւրաշափ  
բանակէն՝ հազիւ 300 հոգիք կրցան  
փախչիլ, զորոնք դարձեալ պիտի ջար-  
դէին Հայք, եթէ չապրեցընէր մեր նա-  
խարարաց մէկուն տիկինն՝ Շուշան. որ

և քրիստոնէաբար գլխով անանց վէր-  
քերն այլ պատելով, զգետ և գրաստ  
տալով դարձուց խաւրեց առ ամիրա-  
պետն Արաբացւոց՝ Աբդլմէլիք. և ընդու-  
նեցաւ անկէջ շատ ընծայ և պատիւ 'ի  
փոխարէն մարդասիրութեանն : Իսկ  
յաղթական գունդն Հայոց՝ թշնամեաց  
աւարներն առին, գնացին համարձակ  
իրենց ճամբան, մօտան յամուր տեղիս  
մեր Տայոց աշխարհին, որ այն ատեն  
Յունաց իշխանութեան տակ էր, և  
կայսրէն այլ պատիւ գտան : — Այս է  
Վարդաւառկերտի կռիւն, անուանի 'ի  
մեր պատմութեան այս ժամանակիս, և  
ամօթալի յԱրաբացւոց պատմութեան,  
որոյ անունն և տարին անգամ չէին ու-  
զէր յիշել. անանկ որ 200 տարի վերջ  
այլ մեր հաւատարիմ պատմչաց մէկն՝  
Վկայէ, թէ՛ « Յարդ ևս բան առ Հագա-  
» րացիսն, ըստ իւրեանց աղխատորոյզ  
» բառին պատմի, թէ Վարդաւառկերտ  
առիւ մի՛ յիշեսցի մեզ » : — Այս կը-  
ռուէն սիրտ առած ուրիշ Հայ իշխանք  
այլ 'ի վանանդ և 'ի Վասպուրական՝  
գիրենք նեղացընող այլազգեաց գուն-  
դերը ջարդեցին : Բայց եթէ ասով՝ ի-  
րենց վտանգը քիչ մը հեռացուցին, ա-  
ւելի այլ ծանրացուցին : Վասն զի ամի-  
րապետն Աբդլմէլիք իր կուսակալաց  
փախստական զօրքերը տեսնելով և լսե-  
լով եղածը, պատուէր ըրաւ Մահմէտ  
ոստիկանին, որ երթայ խստիւ պատժէ  
զՀայս :

Մահմէտ առաջինէն աւելի պատ-  
րաստութեամբ և սրտմոռութեամբ ե-  
լաւ գալու, զՀայաստան սրով և հրով  
մաշելու : Հիմայ մերոնց՝ ոչ միայն անոր  
դէմ կենալու ճար չկար, այլ գրեթէ և  
ոչ փախչելու : Մէկ հատիկ և յետին  
հնարք գտաւ Հայաստան՝ իր սրբակաց  
և ալէվարդ հայրապետը՝ Սահակ՝ փու-  
թացընել ընդ առաջ ահաւոր զօրավա-  
րին. որ եթէ հնար է, իր վարուց, հա-  
սակին և աշտիճանին շնորհօք՝ անոր  
զէնքերը և ձեռքը կապէ : Սրբակենցաղ  
հայրապետն՝ որ արդէն վշտահար տա-

1 Եովհաննէս կաթողիկոս :



ուապեալ կեանքը կնքելու մօտ էր ,  
յանձն առաւ այս դժար պատգամաւո-  
րութիւնը , իբրեւ յետին և ծանր հայ-  
րական պարտք : Ելաւ ( ըստ ոմանց 'ի  
Դամասկոսէ՝ ուր գերեալ էր , և ըստ այ-  
լոց՝ որ հաւանագոյն է ) իր բնիկ երկրէն  
և Եթովպիոյ , վերջին ողջոյնները և օրհ-  
նութիւնները տալով թէ հասարակաց  
որդւոցը , և թէ ամենուն մօր Ս . Եկե-  
ղեցւոյ , որոյ փեսայացեր , և զոր վսեմ ,  
փափուկ և հոգեւանդն երգերով գո-  
վեր գգուեր էր , զոր և մինչև հիմայ  
հնչելով Հայաստանեայց եկեղեցին ,  
կրնայ նախանձելի ըլլալ ուրիշ ազգաց .  
կու հաւանիմ , թէ բաց յայլոց նոյն իր  
մէկ շինած և երգածն իրեն համար եր-  
գեցին իր կղերիկոսքն՝ զինքը յուղար-  
կելու ատեն . « Այսօր քահանայապետ  
» ճշմարիտ՝ աստուածային օրինօքն պա-  
» տուեալ , կանգնէ գրառանկիւն սեղան  
» խաչին . արժանապէս պատարագեալ  
» բաշխէ զմարմին և զարիւնն Տեառն .  
» մաքրապէս մերձեցարուք փրկեալք  
» նոր ժողովուրդք . և հայցեցէք 'ի Քրիս-  
» տոսէ , զի շնորհեսցէ զսա մեզ ընդ  
» երկայն աւուրս » : Այս յետին հայ-  
ցուածքս ոչ շնորհեց Քրիստոս . մանա-  
ւանդ թէ արդէն շնորհեր էր՝ քսանեօ-  
թը տարի երկարելով անոր կաթողի-  
կոսութիւնը : Իսկ հիմայ երբ սիրոյն  
թեւերով ծերութիւնը աւելի թեթեւեղե-  
լով՝ քան զարաբացի հեծելազօրուն ըն-  
թացքը , դեռ Մահմէտ մեր սահմանաց  
չհասած՝ ինքն մտաւ յԱսորիս , և հա-  
սաւ մինչև 'ի Խառան քաղաք , այլ չի-  
կըրցաւ յառաջ շարժիլ . յողնութիւն ,  
ծերութիւն և սրտցաւութիւն՝ վերջին  
հիւանդութիւնը բերին . թեւերը թու-  
լացուց , ոտքերը կապեց մահն , որ միայն  
չկըցաւ սիրտը պաղեցընել՝ ինչուան ա-  
նոր յետին շունչը : Մեր քահանայա-  
պետն այլ նման իր երգած քահանայա-  
պետին յաւիտենից , իր կեանքը տալով  
պիտի ապրեցընէր իր ժողովուրդը . մա-  
հրն հոս շուտ երեցաւ , բայց ոչ հա-  
սաւ . վասն զի մեռնողն ցրուեց անոր  
անյաղթելի կարծեցեալ հնարքը . ճար-  
տասան լեզուին և եռանդուն սրտին

թարգման թողուց ձեռքը կնքած թուղթ  
մը՝ առ ոստիկանն Մահմէտ , պատուի-  
րելով որ իմացընեն անոր իր փափագը :  
Գնացին աղաչաւորքն առ ոստիկանն ,  
որ և շուտով հասաւ 'ի Խառան . բերին  
տուին իրեն թուղթը՝ յորում գրեր էր  
հայրապետն պանչելի իմաստութեամբ  
և ծանրութեամբ մը , խնդրելով որ խը-  
նայէ Հայոց , ներէ անոնց ըրածին ,  
չգաչի անոնց հաւատքին , այլ ինչպէս  
առաջին ամիրապետք թողեր էին՝ ինքն  
այլ թողու . միայն հարկը առնու և պա-  
հէ զաշխարհքը . և եթէ այսպէս ընես ,  
գրէր , Աստուած քու կամքդ կատարէ  
և կու յաջողիս . ապա թէ չես լսեր ին-  
ծի՝ ոչ իմ օրհնութիւնս և ոչ Աստու-  
ծոյ կու գայ վրադ , այլ միտքդ դրածին  
հակառակը կու պատահի , և ամեն կող-  
մէն վրադ չարիք կու թափին : — Զար-  
մացաւ , զարհուրեցաւ ահեղ զօրա-  
վարն . և լսելով որ դեռ թաղած չեն  
սրբոյն մարմինը<sup>1</sup> , եկաւ անձամբ . և  
տեսնելով այն հանդարտեալ հանգու-  
ցեալ կերպարանաց վրայ աստուածա-  
խօս պատգամ մը , խոնարհեցաւ պատ-  
կառանօք , երկու իրեք անգամ ռէչաւ-  
ալէք ըսաւ . որուն՝ կ'ըսեն ոմանք , թէ ,  
մեռեալ մարմինն այլ ինչպէս խօսնակն  
եկեղեցւոյ իր գահուն վրայ հանգչած  
ատենը , պատասխան տուաւ խաղա-  
ղութեան ողջունի : Մահմէտ հայրապե-  
տին աջը բռնելով և վկայ կոչելով զԱս-  
տուած , իբրեւ կենդանի մարգարէի հետ  
խօսեցաւ և ըսաւ . Քու թղթէդ ճանչ-  
ցայ քու իմաստութիւնդ , ով մարդ Աս-  
տուծոյ . դու իմ սուրս կապեցիր , և քու  
ժողովուրդդ ապրեցուցիր . եթէ ուզա-  
ծէդ բան մը չկատարեմ՝ ըսած անէծք-  
ներդ գան վրաս , ապա թէ կատարեմ ,  
ինչպէս որ խօսք կու տամ , օրհնութիւնդ  
վրաս ըլլայ : — Պատմութեանց մէջ քա-  
նի մը անգամ ասոր նման դիպուածք  
կու յիշուին . հոգևոր հօր մը իր հօտը  
կամ քաղաքը բռնաւորի մը հարուած-  
ներէ ազատել՝ միայն խրատով և Աս-

<sup>1</sup> Ոմանք կ'ըսեն թէ ինքն իսկ Մահմէտ պա-  
տուիրեր էր որ չթաղեն ինչուան որ գայ :



տուժոյ հատուցմանց յիշատակաւ. մէկն այլ այս է. և աւելի այլ զարմանալին, որ այս նոր «Սահակ սուրբ հօտապետ» մեր՝ մահուընէն ետեւ այլ իր հովուութիւնը և փրկութիւնը ըրաւ: — Գազանացեալ գետոյ պէս վազող զօրավարն՝ զաղբեցուց զօրքերը. Հայոց զալկահար պատգամաւորները՝ անկարծելի կենաց յուսով նորոգեց. ոչ միայն բանիւ այլ և զրով ազատութեան հրովարտակ կնքելով և տալով, որ առաջին Ալի ամիրապետին տուածէն ետեւ զլիսաւոր ազատագիրն եղաւ Հայոց, և կոչեցաւ Երկրորդ կամ փոքր մաւնշուր: Այս հրովարտակը՝ սուրբ խաչվառից և դրօշուց հետ պարզած՝ տարին հայրապետին մարմնոյն հետ՝ իրեն հաւատարիմքն. և Հայաստան նոր հողի առած՝ իր մահու չափ սիրող և սիրելի հայրապետը հանգոյց յանմահութիւն: . . .

Մտաւ ինքնին Մահմէտ ոստիկանն այլ 'ի Հայաստան՝ բազմութեամբ աւարելի զօրաց հեծելոց և հետևակաց. սակայն հանգուցեալ հայրապետին հեղութենէն՝ իբրեւ սանձուած ծով մը՝ լռեց հանդարտեցաւ, ամենեկին փնաս մը չհասուց Հայոց. և իբրեւ թէ իր առաջին զրկմանց և սպանութեանցը փոխարէն հատուցմունք մ'այլ ըրաւ. ամիրապետին խօսք հասկըցուց, ինչուան որ մեռաւ նա (Արդմէլիք, 705) և յաջորդեց որդին վլիթ կամ վալիտ Ա. որ նոր փարաւոնի պէս չուզելով ճանչնալ իր հօր և ոստիկանին՝ Հայոց հետ ըրած զաշինքը, մանաւանդ թէ դեռ վարդանակերտի և վանանդայ կոտորուածքն աչքին առջև ունենալով, ուղեց անոնց վրէժն առնուլ 'ի Բագրատունւոյն Սմբատայ և իրեն հետ միաբանած ու չմիաբանած նախարարներէն այլ: Հազիւ թէ սպառնալեաց համբաւն հասաւ 'ի Հայաստան, որուն ուրիշ բան չէր մնար՝ բայց հաւատարմութեամբ պահել Մահմէտի մանչուրը, և անոր մեծասրտութեանը ապաւինիլ, երբ Սմբատ, սէզն այն Սմբատ, իր հաւատարմաց և Յունաց վրայ վստահացած, և քինախնդրութեամբ վառուած,

մեծ և բազմավտանգ անխոհմութեամբ՝ ուղեց իբրեւ յանպատրաստից Մահմէտի վրայ հասնիլ. և աղաչանօք կայսերէն ընդունելով մեծ գունդ մը յունական զօրաց, շուտով մտաւ 'ի բաժինն Հայոց Արաբացուց, եկաւ 'ի վանանդ գաւառ, բանակեցաւ 'ի Դրաշպետ գիւղ: Չուշացաւ Մահմէտ այլ 'ի դէմն ելնել, ատոր ըրածովն՝ ինքզինքն ազատած սեպելով իր երդմունքէն. և անոր կարծածէն աւելի շուտ պատրաստութեամբ և շատ զօրքով՝ զրգռեալ պատերազմը յանձն առաւ, մղեց լմնցուց, մեծ և ողբալի կորստեամբ Յունաց և Հայոց, որոցմէ ինչուան 50,000 մարդ, կ'ըսուի, թէ ընկան պատերազմին մէջ. մնացեալ քիչերն այլ կորակոր դարձան. որոց հետ նաև Սմբատ, որ և ինչուան Եգերաց (Աճարայ) փոթի քաղաքը դնաց ամրացաւ: — վալիտ լսելով որ Հայք եղեր են առաջնորդ Յունաց՝ 'ի պատերազմին, նորէն խստիւ պատուէր զրկեց Մահմէտի՝ չխնայելու անոնց: Մահմէտ՝ թէ իր ամիրապետին և թէ մեր հայրապետին ըսածները միաբանել կարծեց. ինքն կենալով տեղը, ('ի Դուին), հրամայեց Նախճաւանի կողմնակալին՝ որ ամիրապետին հրամանը կատարէ:

Նախճաւանի հրամանատարն՝ Գասիմ, զոր մեր պատմիչք կ'աւաւ կամ կ'աւաւ կոչեն, կ'երեւի թէ այն զօրավարաց մէկն էր՝ որ երեք տարի առաջ զարնուեցան 'ի Հայոց, որոց վրայ մեծ ատելութիւն ունէր. և հիմայ յարմար առիթ գտաւ ոստիկանին հրամանը: Ասոնք են ըստ վիպասանին մերոյ աշխարհաւեր կրակը ձգողքն 'ի Հայս. « Հուր 'ի մեզ վառեցին, սատանայի 'ի » նոսա փչելով զբարկութիւնն. և աստ » բան տալով, անօրէն խորհուրդ առեալ 'ի մեզ . . . զի զգօրս և զգօրա » գլուխս, զպետս և զիշխանս, զաղա » տատոհմս և զնախարարազունս, բնա » ջինջ կորստեամբ բառնալով » . . . « սպառնալու մահուամբ վճարեսցէ » և յաղթեսցէ քաջաց և յաղթող նա » հատակացն Հայոց, և ջնջել 'ի միջոյ



» 'ի բաց բառնալ, և ունել զաշխարհս  
 » առանց կասկածանաց » : Միով բա-  
 նիւ Տեառն մերոյ, « Հարից զհովիւն, և  
 » ցրուեսցին ոչխարքն հօտին » . զար-  
 նենք, ջնջենք, ըսին Հագարացիք, Հայոց  
 ամեն իշխաններն և ազնուականները,  
 և անկասկած տիրենք աշխարհին : Ա-  
 պա սուտ և խարդախ խօսքերով հրա-  
 ւէր խաւրեցին ամենայն մեծամեծաց  
 և զօրագլխաց Հայոց, ինչպէս թէ Սրմ-  
 բատայ ըրածը՝ Յունաց գործ սեպէին,  
 և կ'ուզէին նորէն Հայոց հաւատարմու-  
 թեան երգմունք առնուլ, դաշինք դնել  
 և վարձք տալ . նոյնպէս անոնց զօրաց  
 և հեծելոց թոշակն այլ՝ որ տարուէ տա-  
 րի ամիրապետին կողմանէ կու տրուէր  
 անոնց (100,000 դահեկան կամ դրամ) :  
 Հայոց մեծամեծաց շատերն հաւատարմով  
 կամ հնազանդելով հրաւիրին՝ իրենց  
 գլխաւոր զօրականք, թիկնապահք և  
 ընկերք եկան ժողովեցան Կասմայ իշ-  
 խանութեան կողմերը . ուր և ամենուն՝  
 իրենց աստիճանին համեմատ ոչ միայն  
 ընծայ և թոշակ տրուեցաւ, հապա՛նաւ  
 անոնց տարեկան հարկի պարտքն այլ  
 շնորհեցաւ . միայն թէ ինչպէս սովո-  
 րութիւն էր մեծի քով գացողին զէն-  
 քերը վերցընել, ասոնց այլ զէնքերը  
 թողուլ տուին, ինչուան որ գործը լը-  
 մըննայ . միանգամայն և վախնալ մը կու  
 կեղծէին Արաբացիք 'ի Հայոց . և աւելի  
 զգուշութեան համար ուզեցին որ Հայք  
 հաւատարմութեան երգումն այլ ընեն,  
 և հանդիսապէս այլ ընեն, որ երկու  
 կողմին այլ ապահովութիւն և երաշ-  
 խաւորութիւն ըլլայ : Ասոր համար էր  
 որ մտուցին զանոնք, 800 հոգի Նախ-  
 ճուանի և 400 հոգի Հրամի մեծ եկե-  
 ղեցիները, և դռները գոցեցին, ըսելով  
 թէ « Մի՛ դք ելցէ յայս մեծ խորհրդոյ՝  
 արտաքս » : Եւ մինչ Հայք ներսը ար-  
 թըննալով՝ դռները կու փնտռէին, ա-  
 սոնք դուրսը զէնքերնին հագնելով՝ խոր-  
 հուրդ ըրին՝ որ անոնց իշխանաց և զօ-  
 րավարաց գլխաւորները դուրս հանեն .  
 և ուզածնին տեղեկանալէն ետեւ՝ սը-  
 րով և կախաղանով սպաննեն, իսկ ներ-  
 քը թողածները՝ կրակով այրեն . և այն-

պէս ըրին : Մինչդեռ ոմանց պատուա-  
 կան գլխոց համար՝ դուրսը մահուան  
 փայտեր կանգնէին, և սուրն ծարաւի  
 արեամբ կու լափէր հազարամեայ պա-  
 յազատութեամբ ազնուացեալ արիւն-  
 ներ, մէկայլոց համար վերէն կրակ թա-  
 փելով՝ « զտուն աղօթիցն դերեզման  
 » յօրինէին . և գեհեան հրոյն՝ ունէր  
 » զբարեւոնական բոցոյն նմանութիւն ,  
 » վերամբարձեալ հրոյն և ծխոյն . և  
 » զնոյն երգեցին զօրհնութիւն ( երից  
 » մանկանցն, և ապա զհրեշտակացն  
 » երգս ընդ հովիւն ) մինչև 'ի նուա-  
 » ղել ոգւոցն յանլուծանելի բանդին : ...  
 » Աւաղ զնոցա այրումն 'ի միասին հը-  
 » րով . որ լսելիք բերէին զլուր հառա-  
 » չանացն . հայր առ որդի և որդի առ  
 » հայր . եղբայր առ եղբայր և մերձա-  
 »ւոր առ մերձաւոր . բայց ոչ կակղա-  
 » ցուցանէր զսիրտ անօրէն բռնաւո-  
 »րացն : — Անդ ապա հօր՝ որդեծնաց  
 » գութ աղինսն այրէր . և 'ի վերուստ 'ի  
 » ձեղուանէն անկանէր կրակն, և ման-  
 »կանցն 'ի հանդերձան վառէր հուրն .  
 » հարքն 'ի բաց կտրէին . զի առ նոցա ո-  
 » զորմամահութիւնն՝ զիւրեանցն ոչ յի-  
 » շէին . և 'ի զոյգ այրէին առ հասարակ  
 » ամենեքեան » . վասն զի « Բազմավը-  
 » տանդաւոր հրոյն այնորիկ 'ի նիւթա-  
 » կան մարդկան ձեռաց բարձրացեալ,  
 » հրդեհակէզ եղեալ առաստաղակեալ  
 » փայտակերտն՝ այրեցեալ լինէր . հըր-  
 » կիզի մուրն՝ 'ի վերուստ հոսեալ հան-  
 » դերձ միախառն հրովն՝ հեղձամբզ-  
 » ձուկ դառն պատուհասիւ զվախճան  
 » մահու ածելով 'ի վերայ նոցա ամե-  
 » նեցուն , Տաճկեա՛ց զթագմոնքիշնն  
 » զայն աւօզնակաւ 'ի վերջուտ : Եւ  
 » նոցա անդադար գոհաբանութիւնն՝  
 » ընդ սպառեալ ոգւոցն դադարեաց :  
 » — Այսպէս առ հասարակ սպառե-  
 » ցան բազմութիւն նախարարացն Հայ-  
 »ոց 'ի դաւաճանողացն անողորմից :  
 » Բայց ոչ է երեմիա մերձ, որ զաղէտս  
 » անցիցն՝ ողբօք պատմեսցէ լսողացն :  
 » — Արտասուօք բազմաց՝ մի հոգար,  
 » Երեմիա, որ զաչս աղբիւրս խնդրէիր .  
 » 'ի մեր աշխարհս իսկ ծովացաւ ար-



» տասուկաց աղբիւրը » : . . . Այսպիսի դառնադառն արտասուկաց ծով մը հազիւ կարող էր մարելու այն զարհուրելի հրկիզութիւնը, յորում շատ հին Հայկազանց պայազատութիւնը մոխիր դարձան . շատ նախարարութիւնը և սեպհականութիւնը ճղակտոր եղան, և շատ ծովը մարեցան : — Սպանելոց և այրելոց մնացեալ բնտանիքն գերեցան . ժամանակ մը նախնականի մէջ պահեցին, յետոյ տարին 'ի Դուին առ Մահմէտ, և ամառը բանտի մէջ պահելով՝ աշնան ատեն և յաջորդ տարին՝ քշեցին 'ի Դամասկոս առ ամիրապետն, հանդերձ Աղուանից իշխանօք, և շատ աւարով և թալանով, որոց մէկ մեծ մասն այլ իրենք յափշտակեալ պահեալ էին . ինչպէս նաև գերիներէն մէկ քանին այլ . իսկ քշուածներէն « զմեռելոցն 'ի » ճանապարհի՝ ոչ գիտեմ՝ եթէ ընկաւ » լաւ գնոսա գերեզման, և եթէ որպէս » ընկեցեալ եղեն 'ի տեղիս » : Այսպէս « անժառանգ առնէին զաշխարհս 'ի » նախարարաց . յայնմ ժամանակի թա » փուր եղեալ աշխարհս Հայոց, մատ » նէին իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց . » և թշնամեացն ամենօրինակ չարեաց » յարձակեալ 'ի վերայ՝ յանհուն ա » դէտս վտանգի պահէին զբնակիչս աշ » խարհիս . որոց տաղտկացեալ յան » հանգիստնեղութեանցն զհառաչանս » և զաղաղակ հեծութեանն բարձրա » ցուցանէին յերկինս » :<sup>1</sup> — Այս դառնայիշատակ դիպուածն եղաւ յամին 705 և 706, զատկի օրերէն սկսեալ . և այնքան սաստիկ էր սրոյ և հրոյ վրէժն՝ որ Հագարացին անգամ կշտացաւ, և վարդանակերտի ու վանանդայ հարուածները աւելի մոռնալու համար՝ այս տարիս անուանեց Սմ հրդեհի կամ կրակի տարի :

Ահաւասիկ, Հայկակ, այսպիսի հրաժաւալ ծիրանի ծովու մը խռուացեալ եղեգէն դուրս վազեց՝ յետին պայազատն Գողթան, պատանեկիկն վահան . որոյ հայրն խոսրով՝ իր պատուակցաց հետ

սրոյ և հրոյ մէջ վկայելով, վերջին և վահագոյն ժառանգութիւն թողուց այս երեխայ որդեկին՝ իրնահատակութեան և սրբութեան անունը . զոր և սա պահ չեղապէս ժառանգեց, անեցուց և փայլեցուց : Վահան հազիւ չորս տարուան էր կրակին տարին, երբ գուցէ ուրիշ աւելի տարևոր տղոց հետ՝ իր քիչ մը մեծ եղբարքն այլ՝ միամտաբար խայտացող գառանցնման խորովեցան խրամի տաճարին մէջ, երկու իրեք հեղ օղիկ օղիկ գալով իրենց անճրկած դաստիարակաց և ազգականաց առջև, և միայն ափ մը ճերմակ ածիւն թողուցին այնքան խարտեալ և մատղաշ կերպարաններէն . — և այն զուարթածաղիկ հասակներն՝ փոխանակ ծերունափայլ ծնողաց ծոցը պսակելու՝ ուրախութեան ժամերու և սենեակներու մէջ, որպէս զշուշանն և զխոտն վայրի՝ վայրենագոյն ձեռքով խլուած՝ յետ առօրէական փայլման մը՝ արկան 'ի հնոցն, և ոչ են, և ոչ ևս երևին . — և բիւրախօս բամբիւն Գողթան համրացեալ լուէ, և չիղրուցեր չողբար այն թառամեալ զալարութեանց և կայտառութեանց վրայ . վասն զինոյն հարուածն՝ որ զանոնք խամբեց ու խարկեց, զինքն այլ ջարդեց ու ջախջախեց . — և Գողթն գինաւէտ՝ քացխած թթուեցաւ իր մանրիկ պայազատաց դեռարողը՝ քաղցրաբարբառ շրթանց համար, որոց կաթկըթած կաթին, գինւոյն և արեան միջէն անցան գնացին « Հողքը սուրբ մանկանցն, որպէս զբրամս աղանեաց թռուցեալ 'ի յերկինս և դասեալ ընդ զուարթունս երկնից »<sup>1</sup> : . . .

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Կը շարունակուի :

<sup>1</sup> Շարական :